ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ 1946, № 11—12 Общественные науки

Վ. Պետրոսյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ

Հայկական հարցը մեր նոր պատմության հիմնական հարցերից մեկն է։ Անցյալում շատ է գրվել ու խոսվել այդ մասին։ Հայոց պատմության և ոչ մի հարց այնքան մեծ ուշադրության չի արժանացել թե՛ հայ, թե՛ օտար հեղինակների կողմից, որքան Հայկական հարցը։ Հայկական հարցի մասին խոսել ու գրել են հայ, ռուս, եվրոպացի աչքի ընկնող հեղինակներ, տարբեր ուղղության պատկանող հասարակական-քաղաքական գործիչներ։ Մեծ բանակությամբ գրականություն է ստեղծվել այդ հարցի շուրջը հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով։

Հայկական հարցի շուրջը իր ժամանակին առաջ եկած մտքերի աշխույժ բախումը, դժբախտաբար, ոչ բոլոր դեպքերում է ընթացել այդ հարցի ճշգրիտ, գիտական լուսաբանության ուղղությամբ։ Այլ կերպ էլ լինել չէր կարող։ Լինելով ոչ միայն արտաքին՝ միջազգային դիպլոմատիայի, այլև ներքին պայքարի հարց, բնական է, նա չէր կարող զերծ մնալ միակողմանի և տենդենցիոզ մեկնաբանություններից։

Հայկական հարցը միջազգային դիպլոմատիայի պատմության մեջ մտել է որպես թուրքահայ հարց։ Եվ այդ այդպես է։

1878 թ. Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով միջազգային գունավորում ստացած այդ հարցը անմիջականորեն վերաբերում էր միայն թուրքահայերին։ Սակայն, այդպես լինելով հանդերձ, նա բնավ չէր սահմանափակվում թուրքահայ կյանքի շրջանակներում. նա դուրս էր գալիս այդ շրջանակներից և ընդունում էր համազգային գունավորում։ Այլ կերպ էլ լինել չէր կարող, քանի որ հայ ժողովրդի տարբեր հատվածները, ժանավանդ ռուսահայերը, ոչ միայն ազգային, կուլտուր-պատմական հաղորդավոր թելերով, այլև քաղաքական կապերով սերտորեն կապված էին թուրքահայերի հետ և իրավացիորեն նրանց հարցի վրա նայում էին որպես իրենց սեփական հարցի վրա։ Այս իմաստով էլ, ըստ իս, պետք է դիտել Հայկական հարցը և դրանով բացատրել այն ընդհանուր հետաքրքրությունը, որ իր ժամանակին այն առաջ էր բերել բովանդակ հայության մեջ։

Ո՞րն էր Հայկական հարցի բովանդակությունը Թուրքիայում։ Ի՞նչ նպատակներ էին հետապնդում թուրքահայերը։

Հայկական հարցը Թուրքիայում ոչ այլ ինչ էր, եթե ոչ թուրքահայերի, հիմնականում թուրքահայ գյուղացիության ազգային-ազատագրական և սոցիալական պայքարի մի հարց՝ ուղղված սուլթանական ռազմաֆեոդալական դեսպոտիզմի ազգային և ֆեոդալական դաժան ճնշման ու

---

1 Զեկուցված է Հայկ. ՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական ռեֆերատում 1944 թ. ապրիլի 13-ին։

հարստահարման դեմ։ Թուրքահայերի նպատակն էր ազատագրվել ֆեոդալիզմի բարբարոսական ստաղիայում գտնվող թուրք փաշաների ու յուրդ բեգերի լծից, նրանց ոտքի տակ կորչելու վտանգից և միանալ իրենց ռուսահայ եղբայրների հետ ազգային միասնական ընտանիք կազմելու, ազգային ինքնուրույնություն ձեռք բերելու համար։ Այս էր թուրքահայ հարցի գլխավոր նպատակը, նրա բուն իմաստը։

Սակայն, ինչպես աշխարհում ամեն բան, Հայկական հարցն էլ, իր ներքին բովանդակությունից զատ, ուներ իր արտաքին կողմը, արտաքին բովանդակությունը։ Իրերի պատմական բերումով այդ հարցը, ինչպես, ասենք, սուլթանական լծի տակ հեծող հույների, սերբերի, բուլղարների հարցը, այս ու այն չափով կապվում էր եվրոպական մեծ պետությունների արևելյան քաղաքականության, մասնավորապես Թուրքիայի նկատմամբ նրանց հետապնդած գաղութային քաղաքականության շահերի բախման հետ։ Հալածակ հայ ժողովրդի ցանկությանն և ի փաս նրա շահերի, այդ պետություններից յուրաքանչյուրն աշխատում էր Հայկական հարցն օգտագործել իրեն քաղաքական նպատակների համար։ Մեծ պետությունների գաղութային շահերի բախումը Թուրքիայում, անաարակույս, խիստ բացասաբար էր անդրադառնում թուրքահայերի դրության, նրանց ազգային-ազատագրական պայքարի վրա։ Այդ հանգամանքը մեծապես բարդացնում էր Հայկական հարցի լուծման ոչ միայն արտաքին, այլև ներքին պայմանները։

Հայ ժողովուրդը առաջին հերթին թուրքահայությունը, անկարող էր խուսափել Թուրքիայում ստեղծված միջազգային բարդ իրադրություններից։ Առավել ևս նա չէր կարող լքել իր արդարացի գործը՝ իր ազատագրության վեհ գաղափարը և հաշտվել սուլթանական դեսպոտիզմին կուլ գնալու վտանգի հետ։ Նրան մնում էր ելք գտնել սուլթանական դեսպոտիզմի Սցիլլայի և իմպերիալիստական ուժերի Խարիբդայի արանքում։

Մ՞րն էր ելքը։

Գատմության ձայնը, նախորդների օրինակը թելադրում էին այդ ելքը։ Դա Ռուսաստանի հետ միանալն էր, Ռուսաստանին օգնությանն ապավինելը։ Դրա մեջ էիս տեսնում թուրքահայերը իրենց փրկությունը, իրենց ապագան։ Եվ բնավ էլ պատահական չէ, որ նրանք իրենց ազգային-ազատագրական պայքարը տանում էին նախորդների գծած և պատմական փորձով ստուգված ուղիներով, ուղիներ, որոնցով անցել ու իրենց փրկության համար ելք էին գտել նրանց ռուսահայ եղբայրները։

Ի՞նչ ուղիներ էին դրանք։

Հետաքրքրվենք ակնարկ նետենք և ծանոթանանք հայ ազատագրական շարժման զարգացման այդ ուղիների հետ։

Ինչպես հայտնի է, օսմանյան Թուրքիան իր նվաճողական պատերազմների շրջանում, 16-րդ դարից սկսած գավթել էր Հայաստանի արևմտյան ու հարավային մարզերը և, Արևմտյան Անդրկովկասի հետ, դարեր շարունակ պահում էր իր լծի տակ։ Հայաստանի մնացած մասը, Արևելյան Անդրկովկասի հետ, գտնվում էր Մերձավոր Արևելքի երկրորդ հզոր բռնապետության՝ շահական Պարսկաստանի տիրապետության տակ։

Մի քանի դար շարունակ հայ ժողովուրդը Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների հետ, անօրինակ ծանր կյանք էր տանցկացնում թուրք

փաշաների ու պարսիկ խանների լծի տակ։ Տնտեսական, քաղաքական, ազգային և կրոնական ճնշումներն ու հալածանքները մի կողմից, պարսկա-օսմանյան երկարատև ու դաժան պատերազմները Հայաստանի տերիտորիայում մյուս կողմից, ծայր աստիճան բայքայել էին երկիրը, կործանման եզրին հասցրել ժողովուրդը։

Հայ ժողովրդի ապրած այդ ծանր օրերը հետևյալ կերպ է նկարագրել 18-րդ դարի հայ աղետագրական մտքի մանիֆեստի՝ «սոբ տեսրակ որ կոչի Յորդորակ»-ի հեղինակ, բոցաշունչ հայրենասեր Մովսես Բագրատյանը։

«Ի՜ն քաղաքք, ոչ շէնք, և ոչ դղեակք ամրոցաց
Մնացին՝ որք ոչ խորտակեալ քակտեցան.
զի միանգամայն, թէ դիւզօրէք՝ թէ տանք և
ագարակք վեր ի վայր կործանեցան. . .
«Բոլոր երկիրս մեր յանապատ դարձաւ,
«ամեն աշխարհս մեր կորդացեալ խոպանացաւ,
«կարկաչահոս գետօրէքն մեր ողջոյն յարիւն փոխարկեցան»։[1]

Հայ ժողովրդի հերոս գավակները բազմիցս փորձել էին ազատագրվել պարսկական և օսմանյան դեսպոտիզմի լծից։ 17-18-րդ դարերը հայ ազատագրական մտքի ու գործի մաքառումների դարեր էին։ Բայց սեփական ուժերով միայն, այն էլ բաժան-բաժան արված, անհնարին էր թոթափել պարսկա-օսմանյան հզոր բռնակալությունների լուծը։

18-րդ դարի սկզբից հայ ժողովուրդը իր ազատագրական պայքարի բախտը սերտորեն կապում է ռուս մեծ ժողովրդի բախտի հետ։ Հայ ազատագրական շարժումների հիմնադիր, մեծ հայրենասեր Իսրայել Օրին 1701 թ. հիմք է դնում հայ-ռուսական ամուր բարեկամության։

Իսրայել Օրու ցանած սերմերը տալիս են իրենց պտուղները։ 1722 թվականին պարսկական և օսմանյան հափշտակիչների դեմ առաջին անգամ գինված պայքարի դրոշ են պարզում Օրու հայրենակիցները։ Զանգեզուրի և Ղարաբաղի քաջարի ժողովուրդը, հռչակավոր զորավար Դավիթ Բեկի և ուրիշների գլխավորությամբ, յոթ տարի շարունակ անհավասար, հերոսական կռիվներ էր մղում պարսկա-օսմանյան զավթիչների դեմ, հույս դրած Ռուսաստանի օգնության վրա։

Արտաքին և ներքին հանգամանքների բերումով Դավիթ Բեկի ապըստամբությունը պարտվում է։ Սակայն ազատատենչ հայ ժողովուրդը ցած չի դնում իր զենքը։ Ավելի քան մի դար մաքառելուց հետո, 1827 թվականին, Ռուսաստանի օգնությամբ, նա վերջնականապես թոթափում է պարսկական դեսպոտիզմի լուծը և անցնում Ռուսաստանի տիրապետության տակ։

Նոր էրա է սկսվում հայ ժողովրդի պատմության մեջ։ Տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման նոր հեռանկարներ են բացվում նրա առաջ։ Մնվում է այդ էպոխայի Եղիշեն՝ մեր մեծանուն բանաստեղծ, հայրենասեր, լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, որը և կանգնեցնում է հայ-ռուսական բարեկամության, ինչպես և իր էպոխայի ամենամեծ հուշարձանը՝ սրտաբուխ «Վերք Հայաստանի»։

[1] Մովսես Բագրատյան — Նոր տետրակ որ կոչի Յորդորակ, Մադրաս, 1772 թ., էջ 18—19։
Տեղեկագիր 11 18—4

Արտահայտելով իր ժողովրդի զգացմունքները, Աբովյանն այդ հուշարձանի վրա գրոշմում է հետևյալ անմահ խոսքերը «Դժոխքի քանդվելը մեղավորների համար ես զինը չէր ունենալ. ինչպես Երևանու բերդի առնիլը (կարդա Հայաստանի անցնելը Ռուսաստանի տիրապետության տակ։ Վ. Պ.) հայերի համար. . . Քանի Հայաստանն իր փառքը կորցրել էր, քանի հայք իրանց գլուխն էին քրի տեղ թշնամու ձեռք գցել, ես օրը, ես ուրախություն չէին տեսել, չէին վայելել»։[1] Ռուսահայերի սրինակը ուսանելի էր թյուրքահայերի համար։ 1828—1829 թ.թ. ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ թուրքահայերը ռուսահայ եղբայրների օրինակով ոտքի են կանգնում՝ ռուսների օգնությամբ ազատագրվելու օսմանյան բռնակալության լծից։ Նրանց ցանկությունը չի կատարվում։ Շուրջ իննսուն հազար հայեր կամավոր կերպով գաղթում են Անդրկովկաս՝ մտնում ռուսական տիրապետության տակ։

1853—1856 թ.թ. Արևելյան պատերազմը նոր մղում է տալիս թյուրքահայերի ազգային-ազատագրական շարժումներին։ Նոր բեկում է սկսվում մեր պատմության մեջ։ Նրանք, ինչպես անցյալում, իրենց փրկության հույսը կապելով Ռուսաստանի հետ, ամեն կերպ աջակցում են Կովկասյան ֆրոնտում գեներալ Բեհրութովի գլխավորությամբ գործող ռուսական զորքերին։

Արևելյան պատերազմում Ռուսաստանը պարտություն է կրում։ Թուլանում է նրա ազդեցությունը Թուրքիայում։ Բայց չնայած դրան, չնայած Ռուսաստանի մրցակից եվրոպական մեծ պետությունների՝ մախինացիաներին, հայ ժողովուրդը հավատարիմ է մնում հայ-ռուսական դարավոր բարեկամության արտդիցիաներին։

19-րդ դարի 50—60-ական թվականներին թուրքահայերի ազգային-ազատագրական շարժումները թևակոխում են նոր էտապ։ Մի կողմից Արևմտյան Եվրոպայի (գլխավորապես Ֆրանսիայի) 1848 թ. բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի և Իտալիայի ազգային-ազատագրական պայքարի (1859 թ.), իսկ մյուս կողմից ռուսական և արևելահայ ռեոլուցիոն շարժումների ազդեցության տակ, ազգային շարժման մեջ են ներգրավվում արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիայի, արհեստավորության ու գյուղացիության նորանոր շերտեր։ Աճում է հայերի ազգային-քաղաքական գիտակցությունը, սրվում է արհեստավորության (էսնաֆների) ու ամիրայության պայքարը (առանձնապես Պոլսում) և, որ գլխավորն է, աշխուժանում են հայերի ազգային-ազատագրական շարժումները սուլթանական դեսպոտիզմի դեմ։

Հայ ազատագրական շարժման այս էտապի ամենանշանակալից առտահայությունը Զեյթունի գյուղացիության 1862 թ. հերոսական ապըստամբությունն էր։ Հայ ժողովրդի հերոսական անցյալի փառահեղ դրվագներից մեկը։ մի «փառավոր առեավատչյա հայկական ֆաջռասրտության», ինչպես կասեր մեր շնորհալի բանաստեղծ Սմբատ Շահազիզը։ Ապատասեր գեյթունցիք դինված պայքարի օրինակ էին տալիս սուլթանական Թուրքիայի ազգային և ֆեոդալական կրկնակի լծի տակ տառապող հայ աշխատավորու-

[1] Խ. Աբովյան—Երկեր հ. 1-ին, էջ 208, 1939 թ., Երևան

թյանը։ Հերոսական Զեյթունը նոր մղում էր տալիս հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին։

19-րդ դարի կեսերին թյուրքահայ աշխատավորության ազատագրական պայքարին օգնության ձեռք է մեկնում ռուսահայ ռեոլուցիոն դեմոկրատիան հանձին նրա առաջնորդ Միքայել Նալբանդյանի։

Լոնդոնի պրոպագանդիստների բարեկամը, Դերցենի և Չերնիշևսկու գաղափարական ազդեցության տակ, հայ ժողովրդի ազատագրությունը կապելով ռուս ժողովրդի ռեոլուցիոն շարժումների հաղթանակի հետ, առաջին անգամ ձեռնամուխ էր լինում այդ շարժմանը մասնակից դարձնելու նաև թյուրքահայությանը։ Նալբանդյանը ձգտում էր սերտ կապ ստեղծել ռուսահայ և թյուրքահայ ռեոլուցիոն դեմոկրատական շարժումների միջև՝ մի կողմից և հայերի ու Ռուսաստանի ժողովուրդների ռեոլուցիոն շարժումների միջև՝ մյուս կողմից։ Այդպիսով, Նալբանդյանը հայ ժողովրդի ազատագրությունը ցարիզմի և սուլթանիզմի լծից կապում էր Ռուսաստանի ժողովուրդների, առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի ռեոլուցիոն պայքարի հետ։ Դա հայ ժողովրդի ազատագրության նոր ուղի էր՝ ռեոլուցիոն-դեմոկրատական ուղի։

Ժամանակաբար հյուսիսի ցուրտը—ցարիզմը շուտ սառեցրեց հայ ռեոլուցիոն մտքի այդ դալար ծիլերը, և այն չկարողացավ անհրաժեշտ չափով աճել ու տարածվել։

Նալբանդյանի արևմտահայ բարեկամները՝ Ստեփան Ոսկան, Հարություն Սրվանձյան, Սերոբե Թաղվորյան և ուրիշներ, կտրված լինելով Ռուսաստանի ռեոլուցիոն շարժումներից, չկարողացան թյուրքահայ իրականության մեջ ծավալել Նալբանդյանի սկսած գործը։ Նալբանդյանից հետո ռուսական ռեոլուցիոն-դեմոկրատական շարժման ազդեցությունը գնալով նվազեց թյուրքահայ (և ոչ միայն թյուրքահայ) ազգային-ազատագրական շարժման վրա։

Արևմտահայ կյանքում (գլխավորապես Պոլսում և Իզմիրում) 19-րդ դարի կեսերին նկատելի չափով աշխուժացավ բուրժուա-դեմոկրատական շարժումը։ Այդ շարժումը գլխավորում էր արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիան, և ոչ թե, ինչպես ընդունված է կարծել, առևտրական բուրժուազիան։ Պայքարի գլխավոր հարցերից մեկը այսպես կոչված «Ազգային Սահմանադրություն» էր, որը սահմանվեց 1850-ական թվականներից հրապարակ էին հանել Արևմտյան Եվրոպայում կրթություն ստացած և 1848 թ. ռեոլուցիայի օրերն ապրած մի խումբ աշքի ընկնող հայ մտավորականներ՝ Ռուսինյան, Սերվիչե (Սերոբե Վիշենյան), Օտյան, Պալյան և ուրիշներ։ Ուշագրավ է, որ հայ սահմանադրականներից ոմանք հետագայում ակտիվ մասնակցություն ունեցան «Թուրքական Սահմանադրության հայր» Միդհատ փաշայի հրապարակ հանած Սահմանադրության (1876) մշակմանը։

Ազգային Սահմանադրության համար մղվող պայքարը իր էությամբ դեմոկրատական, պրոգրեսիվ պայքար էր՝ ուղղված ամիրայության, կղերականության և սուլթանական ռեժիմի դեմ։ Ուշագրավ է, որ այդ պայքարում սահմանադրության կողմնակիցները որոշ հաջողություններ են ձեռք բերում։ 1860 թ. մայիսի 24-ից սկսում է գործադրվել Ազգային

Սահմանադրությունը, իսկ 1863 թ. մարտի 17-ին այն վավերացվում է Ի. Բոան կողմից։

Թուրքահայ Ազգային Սահմանադրությունը իրականում, իհարկե, սահմանադրություն չէր։ Դա ավելի շուտ «հայ հեմայնքի մի ստատուտ, կանոնադրություն» էր, ինչպես իր ժամանակին նկատել է միջազգային իրավունքի մասնագետ Ռոլեն Ժաքմենը։ Դա չէր ապահովում և չէր կարող ապահովել թուրքահայերի իրավունքները։ «Այստեղ ամեն, ինչ կար, ասում է նույն հեղինակը, բացի մի հողվածից, որի վրա հայը կարողանար հենվել, որպեսզի քուրդը չխլեր նրա ոչխարները, բեյը չրոնաբարեր նրա աղջիկներին և չավերեր նրա հողը. հարկահավաքը երկու կամ երեք անգամ չպահանջեր միևնույն հարկը, մի խոսքով՝ ամեն ինչ կար, բացի մի այնպիսի կարգադրությունից, որն իրոք երաշխիք լիներ թուրքական կառավարության կամայականության դեմ»։

Ազգային Սահմանադրությունը, համենայն դեպս, եթե «օդային մի ամրոց» չէր, ինչպես, ծայրահեղության մեջ ընկնելով, որակում էր Գրիգոր Արծրունին, ապա նա ի վիճակի էլ չէր պաշտպանելու թուրքահայերին օսմանյան կառավարության հարստահարություններից։ «Հային կողոպտում են, հարստահարում են, չարչարում են, ծեծում են, անպատվում են։ Ո՞ւր է սահմանադրությունը, որ պետք է պաշտպաներ նրան», գրում էր Գրիգոր Արծրունին։

Տակավին 1861 թվականին Միքայել Նալբանդյանը երկու խոսքով բնութագրել է Ազգային Սահմանադրությունը՝ ասելով. «Դա մի անուն է, որ անիմաստ է թե հայ ազգի և թե այս կանոնադրության իսկ վերաբերյալ»։[4]

Չպետք է մոռանալ, որ սուլթանի կառավարությունը, իր ժամանակին, այդ էլ շատ էր համարում հայերի համար և այն, ինչպես սադրազամ (մեծ վեզիր) Ալի փաշան է ասում, փաստորեն դարձրել էր «քառակուսի անիվ», որպեսզի երբեք չկարողանար յոնդից շարժվել։

Եվ ոչ միայն այդ։ Առհասարակ հայերի յուրաքանչյուր քայլը իրենց ազգային իրավունքների պաշտպանության, իրենց տնտեսական, կուլտուրական կենսական պահանջների բավարարման ուղղությամբ հանդիպում էր տիրող ռեժիմի ուժեղ դիմադրության։ Իսկ երբ հայերը հարկադրված էին լինում դիմելու եվրոպական մեծ պետությունների օգնության (այդպես վարվեցին, օրինակ, զեյթունցիք 1862 թ. ապստամբության ժամանակ, Կարապետ վ. Շահնազարյանի միջոցով օգնություն խնդրելով Ֆրանսիայի կայսր Նապոլեոն 3-րդից), ապա, որպես կանոն, նրանց այդօրինակ քայլերին հետևում էին ավելի խիստ ճնշումներ ու հալածանքներ։

Այսպիսով Եվրոպայի ու Ռուսաստանի բուրժուա-դեմոկրատական շարժումների էպոխայում իրենց վերելքն են ապրում նաև հայերի ազգային-դեմոկրատական շարժումները։ Ֆեոդալական Թուրքիայի հետամնաց իրականության մեջ տեղի ունեցած հայկական այդ շարժումները իրենց բնույթով ազգային-ազատագրական, պրոգրեսիվ շարժումներ էին։

---

[1] *М. Г. Ролен-Жакмен*, Армения, армяне и „трактаты", перевод с французского О. Х. А., 1896, Москва, 18.

[2] Նույն տեղ, էջ 19։

[3] «Մշակ», 1876 թ. № 45։

[4] Մ. Նալբանդյան—«Անտիպ երկեր», էջ 66։

Վ. Ի. Լենինը «Под чужим флагом» վերնագրով 1917 թ. հրատարակած հոդվածում խոսելով պատմության պերիոդիզացիայի մասին՝ 1789 թ. ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայից մինչև 1871 թ. ֆրանս-պրուսական պատերազմը համարում է բուրժուազիայի վերելքի և ֆեոդալիզմի անկման շրջան, ընդհանրապես բուրժուա-դեմոկրատական և մասնավորապես ազգային-բուրժուական պրոգրեսիվ շարժումների շրջան։[1]

Լենինյան այս պերիոդիզացիան, մեր կարծիքով, ամբողջությամբ վերաբերում է նաև հայերի ազգային-ազատագրական շարժումներին, և այդ լույսի տակ այսուհետև մենք պետք է գնահատենք մեր ազգային շարժումները։

19-րդ դարի 70-ական թվականներից հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ նոր շրջան է սկսվում։ Դա Հայկական հարցի այսպես կոչված շոնդալից շրջանն էր։ Պատմական-ժամանակագրական տեսակետից դա համընկնում էր մի կողմից Թուրքիայի լծի տակ ճնշվող բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների աշխուժացման, իսկ մյուս կողմից «Թուրքիայի ժառանգության» համար իմպերիալիստական պետությունների միջև մղվող պայքարի սրման հետ։

Բնական է, հայերը չէին կարող անտարբեր մնալ տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ։

Հայ ժողովրդի գանազան շրջաններում ամենուրեք նոր աշխուժով սկսում է արծարծվել Հայկական հարցը։ Ժամանակակից հայ մամուլը աննախընթաց ուշադրություն է նվիրում այդ հարցին։ Նշվում են հարցի լուծման տարբեր ուղիներ։

Արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիայի ինքնատիպ ներկայացուցիչներից մեկը՝ Մաքսիմոս Մամուրյանը, Զմյուռնիայում ապաստանած իր թերթում անդրադառնալով այդ հարցին, գրում է.

«Մեզ վիճակակից ժողովուրդներն զարուս շարժումներն շատ հեռու մնացած են...

Հուսալ, որ օտար ազգ մը Հիսուսի բրած հրաշքը պիտի գործե՝ ցնորք է։ Սպասել, որ արտաքին փրկիչներ դան և հայ ժողովրդյան սև պատանքը քակեն հիմարություն է։ Հեք և ստրուկ ժողովրդյան մը առաջին և միակ ազատարարն ինքն է. իր աշխատությունն է, իր ներքին ուժն է. իր լույսն, միությունն ու հաստատ կամքն է...

Քանի քանի գորավոր թշնամիներ կան մեր առջեր. չքավորություն, նախապաշարում, տգիտություն, հարստահարություն, բռնություն։

— Ինչպես պետք է դուրս գալ այդ ծանր գրությունից։ Ի՞նչ միջոցներով պետք է հասնել առաջադրված նպատակին. հարցնում է Մամուրյանը և պատասխանում. «Միջոցներ շատ կան. սակայն անհրաժեշտ միջոցները, որ կրնան հետգհետե զարգանալ, արդյունավորելու համար մանավանդ միություն պետք է, միություն նպատակի, միություն ուժերու, միություն գործունեության։ Այս միությունն ալ կիրագործի ընկերություններով։ Բոլոր ազգն դասու հայք պարտին մասնակցիլ։»[2]

Խոսելով ճնշված ժողովուրդների ազատության և մեծ պետությունների քաղաքականության մասին, Մամուրյանը գրում է. «Մեծ պետու-

[1] В. И. Ленин, т. XVIII, стр. 108—109.

[2] «Արեւելյան մամուլ», 1876 թ. հունվար, էջ 5—6. ընդգծումները բնագրինն են։ Վ. Պ.։

թյանց մեջ ազգերը դեռ իրենց ճակատագրին տերը չեն և կնճռոտ քաղաքակա՛նության մը ծուղակն ընկած են։ Այս քաղաքականությունը՝ հանրազգային իրավանց, ճնշյալ ժողովրդոց պաշտպանության ե՞ազատության, հարստահարության բարձման խոշոր խոշոր բառերով ասպարեզ կիջնե...։ Մեկ ձեռնով խաղաղության ձիթենիի ոստ բռնած է, մյուս ձեռնով գյուրավառ խնդիրներու վրա վառոդ կցանե...։ Այսանդ կարձակե սարուկը, տյնտեղ դանի կկապե ու կկեղեքի, տեղ մը ազատություն կբաշխե, ուրիշ տեղ շղթաներ կդարբնե, վասնզի ժողովուրդները դեռ իրենց ճշմարիտ շահուց անտեղյակ են, թույլ կտան, որ կառավարությունները զիրենք պատրեն և իրենց անվամբ անիրավություն և բռնություն գործեն։ Եվրոպա իր բնական կյանքը դեռ չգտավ...։

«Մինչև որ քաղաքական հավասարակշռություն ըսվածը ժողովրդոց ժառայի, բարոյական, տնտեսական դաշնավորության վրա չհիմնվի, մինչև որ արդարության միօրինակ բաշխման և ազատության մեջ չկայանա, մինչև որ արքուն այլ ճնշյալ, լուսաժիտ այլ դերի ժողովրդոց վերակենդանության մեջ չհաստատվի, աշխարհիս խաղաղություն հանելուկ պիտի դառնա և նենգադիր դիվանագիտության մը շինածն։ ազգաց անտես առնված իրավունքն ուերբեն արդար ցասումը պիտի կործանեն տպագային մեջ։»[1]

Այսպիսով, Մամուրյանը Թուրքահայերին կոչ էր անում սեփական ուժերով կազմակերպված պայքարի դուրս գալ չքավորության, խավարիրոնության դեմ, իրենց ազատագրության հույսը իրենց վրա դնել, առանց սպասելու, թե արտաքին փրկիչներ կգան. ինչպես ինքն է ասում. «Հայ ժողովրդյան սե պատանքը կքակենց։»

Մամուրյանը դեմ էր մեծ պետությունների միջամտությանը։ Նրա կարծիքով Թուրքահայերի ազատության գործում որոշակի դեր պետք է կատարեին ոչ թե արտաքին, այլ ներքին գործոններ։

Մամուրյանը մերժում էր Իրիգոր Արծրունու և նրա «Մշակ»-ի ռուսական օրիենտացիան։ Արծրունու դեմ մղած պոլեմիկայի ժամանակ նա ձեռք էր մեկնում ազգային պահպանողական դեմոկրատներին (Մերենց և ուրիշներ), չբաժանելով հանդերձ նրանց տեսանեստները մի շարք հիմնական հարցերում։

Այսպես, օրինակ, իր թերթում տպագրելով Մերենցի պատասխանը «Մշակ»-ում տպագրված Մելիքզադեի (Լաֆֆու) հոդվածի դեմ, Մամուրյանը հետևյալ շատ կարևոր վերապահումն է անում։ Մերենցը առարկելով Արծրունու և Լաֆֆու ապստամբական կոչերի, մարտական գործելակերպի դեմ, գրում է. «Մենք կըզգենք, որ ամեն հեղափոխություն վերեն ա և ոչ վարեն. վարեն եկած հեղափոխությունք (թե որ հաջողին ալ) այնչափ ազեաք, այնչափ թշվառություն ունին և այնչափ արյունների առիթ կլինին և հայոց ազգն այնչափ քիչ արյուն ունի յուր երակներուն մեջ, որ իր կարողությունեն վեր է այդ մասին շոայլ լինել և ընդհակառակն, վերեն եկած հեղափոխությունք միշտ հաստատ են և երբեք այն արյանց գներով չեն լինիլ։»

Մերենցի այս ակնհայտ ռեֆորմիստական տեսակետի դեմ Մամուրյանը

[1] «Արևելյան մամուլ», 1876 թ., ցունվար, էջ 38։

[1] «Արևելյան մամուլ», 1876 թ., հոկտեմբեր, էջ 349–350, ընդգծումը մերն է։ Վ. Պ.։

գրում է հետևյալ խմբագրական ծանոթությունը. «Ներվի մեզ ասել, որ այս մասին մեծապատիվ նամակագրին հետ տարակարծիք կգտնվինք։ Այդ գրությունն ամեն տեղի ու պարագայի չկրնար հատկանալ»։

Մամուրյանը արևմտահայերի ազգային-ազատագրական և լուսավորական շարժման կարկառուն դիմքերից մեկն էր։ Երիցյանի, Սրվանձտյանի, Մերենցի և ուրիշների նման նա իրեն ազատակամ նվիրել էր հայկական դատի պաշտպանությանը։ Հայկական հարցում Մամուրյանը ինքնուրույն գիծ էր տանում և չէր բաժանում ոչ «ռուսոֆիլների», ոչ «անգլոֆիլների» և ոչ էլ «թուրքոֆիլների» տեսակետները։ Ճիշտ նշելով ժողովրդի ուժերի համախմբման, սեփական պայքարի միջոցով ազատություն նվաճելու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ նա չկարողացավ բմբռնել Հայկական հարցի դիպլոմատիայի գոպանակները. նրա լոգիկան։ Մամուրյանը չկարողացավ ըմբռնել Հայկական հարցի ներքին և արտաքին բովանդակության դիալեկտիկան, ուստի և ի վեճակի չեղավ իր ժամանակին ճիշտ ուղի նշել նրա լուծման համար։

Ճիշտ առարկելով Մերենցին ընդհանուր քաղաքականության հարցերում, Մամուրյանը, պակաս, անգլիական կոնսերվատիվ դեմոկրատների ազդեցության տակ, անհետևողականություն էր հանդես բերում, նահանջում էր իր ռադիկալ դեմոկրատական դիրքերից թուրքահայերի ազգային-ազատագրության հարցում։ Դեմ դուրս գալով մեծ պետությունների միջամտության, հայերի ազատագրությունը հիմնականում կապելով ներքին գործոնների հետ, ինչպես ինքն է ասում, «Մահու և կենաց խընդիր մը դարձած ազգային առաջադիմության և ազգային վերաշինության» հետ, այնուամենայնիվ նա որոշ հույսեր էր կապում նաև «բարեխնամ» կառավարության արքունի և վարչական ռեֆորմների հետ։

Հայ հասարակական մտքի և հասարակական հոսանքների բազմաթիվ այլ ներկայացուցիչներ ու օրգաններ ես, 1870-ական թվականներից սկսած, մեծ հետաքրքրություն են ցույց տալիս Հայկական հարցի նկատմամբ։ Անդրկովկասում, Ռուսաստանում, Թուրքիայում, Եվրոպայում և այլուր ամենուրեք հայկական շրջաններում մեծ աշխուժով սկսում են արծարծել այդ հարցը։ Զանազանակերպ միջոցներ, տարբեր ուղիներ են նշվում Հայկական հարցի լուծման համար։ Ի դեպ, հեշտ էլ չէր միանգամից ճիշտ կողմնորոշվել այդ հարցում։ Հայ ժողովրդի նոր պատմության մեջ, ավելի քան որևէ այլ հարց, Հայկական հարցը կապված էր արտաքին և ներքին դժվարությունների հետ, նա մեր ժողովրդին հուզող ամենաբարդ ու ամենախճճված հարցերից էր։

Եվ ահա, ասպարեզ է իջնում նշանավոր հայ հրապարակախոս Գրիգոր Արծրունին իր «Մշակ»-ով («Մշակ»-ը սկսում է լույս տեսնել 1872 թ. հունվարի 1-ից), Հայկական հարցի մասին իր համարձակ տեսակետներով։

1873 թվականից սկսած գրեթե իր ամբողջ ուշադրությունը նվիրելով թուրքահայերի ազատագրության հարցին, կարճ ժամանակամիջոցում նա մի ամբողջ շարժում է առաջ բերում ռուսահայ և թուրքահայ հասարակական շրջաններում։ Արծրունին և «Մշակ»-ը աննախընթաց թափով առաջ են մղում Հայկական հարցը։

[1] Նույն տեղ։

Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական տարժուումները և նրանց նկատմամբ Ռուսաստանի բռնած նպաստավոր դիրքը ոգեշնչում են Արծրունուն և Թուրքահայերի ազատագրությամբ շահախնդիր բոլոր հայրենասերներին։

1875 թ. Բոսնիայի և Հերցեգովինայի, 1876 թ. Սերբիայի և Բուլղարիայի ապստամբությունները սուլթանական լծի դեմ՝ պայքարի են կոչում այդ նույն լծի տակ տառապող հայ ժողովրդին։ Արևելյան հարցը վերստին կանգնում է մեծ պետությունների ուշադրության կենտրոնում։ Արևմտա-եվրոպական և ռուսական մամուլը լայնորեն սկսում են քննարկել այդ հարցը։

Գրիգոր Արծրունին և նրա համախոհները նույնպես «Մշակ»-ում բազմաթիվ հոդվածներ են նվիրում Արևելյան հարցին, դրա հետ կապելով նաև հայկական հարցը։

«Ամբողջ տարի է արդեն, գրում է Արծրունին, որ թե եվրոպական հասարակական կարծիքը, թե ընդհանուր քաղաքականությունը զբաղված են Արևելյան հարցով...

Քրիստոնյա ազգերի անունները, որք ապստամբված են Թուրքաց անտանելի լծի դեմ, հիշվում են յուրաքանչյուր լրագրում... Միայն մի ազգի անունը ոչ մի տեղ չենք պատահում ոչ լրագիրներում, ոչ դիպլոմատիական թղթերում, ոչ էլ առօրյա խոսակցության մեջ։ Բայց այդ ազգը, հայերը, փոքր ազգ չեն։ Ստ. երեք միլիոն քրիստոնյա ժողովուրդ, Թուրքաց տերությանը հպատակ նույնքան և գուցե ավելի թշվառ դրության մեջ է գտնվում, քան թե սլավոնական ազգերը»[1]

«Մշակ»-ում Արծրունին տպագրում է դոկտոր Սպանդար Սպանդարյանի «Արևելյան խնդիրը և հայերը Թուրքիայում» ընդարձակ հոդվածը, որտեղ հեղինակը գրում է.

«Արդեն մեկ տարի է, որ Բալկանյան թերակղզում քրիստոնյա ազգերը զենքը ձեռներին մարտնչում են յուրյանց ազատության համար։ Մեծն տեսակ չարաչար նեղությունների ընդդիմանալով՝ լավ են համարում պատերազմի դաշտում մեռնել, քան թե կրկին օսմանյան տերության ծանր լծի տակ մնալ, որտեղ մարդը զուրկ է ամենահասարակ մարդկային իրավունքներից՝ նա կրում է մարդ անունը իբրև ծաղր միայն։

Այնուհետև խոսելով հայերի մասին, Սպանդարյանը գրում է. «Ոչ մեկ քրիստոնյա ազգ կա Արևելքում, որ այնչափ հալածանքի, նեղություններ ենթարկված լինի, ինչպիսի է մեր թշվառ հայոց ազգը... Հայերը կրում են դառն սարկության լուծը, անտեր ու անոգնական է հայոց ազգը Թուրքիայում...

Ինչ կա ավելի բարձր, ավելի սուրբ, քան թե յուր անձը, յուր պատիվը պաշտպանել, թե այդ ես մարդը յուր կյանքով վճարեր... Հայերի համար օտարը ծամելու չէ, որ իրանք կուլ տան։ Սակայն հայերը ուզում են մարդավայել կյանք վարեն և խաղաղ ապրեն, պետք է իրանց շրջապատող ազգերից պատվված լինեն»[2]

Այս նույն ոգով են համակված Պարսկաստանից Մելիքզադեի - Ռաֆֆու

---

1 «Մ.-ան», 1876 թ. հուլիսի 1, № 24 ընդգծումները բնագրինն են։ Պ.

2 «Մշակ», 1876 թ. № 24 և 25

դրամ նամակները, որոնք Արծրունին սիրով տպագրում էր իր թերթում, և «Մշակ»-ի մի շարք ուրիշ աշխատակիցների քղթակցությունները։

Արծրունին և նրա համախոհները, հաշվի առնելով թուրքահայերի դրությունը, նրանց ունալ ուժերն ու կարողությունները, ինչպես և անդյալի փորձը, դանում էին, որ թյուրքահայերը առանց դրսի օգնության, սեփական ուժերով միայն, չեն կարող ազատագրվել սուլթանական դեսպոտիզմի լծից, թուրք փաշաների ու քուրդ բեկերի հարստահարություններից։

Արծրունին չէր կասկածում, որ ռուսահայերը օգնության ձեռք կմեկնեն սուլթանական լծի տակ հեծող իրենց եղբայրներին, բայց նրա կարծիքով այդ էլ բավական չէր թուրքահայերի փրկության համար։ Անհրաժեշտ էր ավելի մեծ, ավելի հզոր ուժի միջամտություն։ Ռուսի Արծրունին ավելի համարձակ, ավելի վճռական, քան որևէ մեկը իր ժամանակին, խարազանելով սուլթանական բարբարոսական ֆեոդալական կարգերը և նրան այս ու այն նկատառումներով «պաշտպան» կանգնած եվրոպական մեծ պետությունների քաղաքականությունը, վերստին առաջ էր քաշում ռուսական օրիենտացիայի հարցը։

Թուրքահայերի ազատագրությունը սուլթանական դեսպոտիզմի լծից Արծրունին կապում էր Ռուսաստանի օգնության հետ։

Կասկածից վեր է, որ Արծրունին և նրա կողմնակիցները Ռուսաստանի ցարական կարգերի երկրպագուներ չէին, ոչ էլ այնպես, ինչպես անտի-ցարական դիրքերի վրա կանգնած Մամուրյանը, Կարապետ վ. Շահնազարյանը, Ծերենցը և ուրիշները սուլթանական ռեժիմի երկրպագուներ չէին։ Եթե այդ այդպես է, իսկ դա անպայման ճիշտ է, ապա թե՞նչն էր Արծրունուն և հայ-հասարակական բոլոր պրոգրեսիվ ուժերին մղում դեպի ռուսական օրիենտացիա, ընդդեմ սուլթանական դեսպոտիզմի։ Ահա այս հարցն է, որ մեր քննիչ և քննչական նոր սերնդի ուսումնասիրողներից շատերը ճիշտ չեն ըմբռնել և պատմական, իրականությունից հեռու գնահատականներ տվել ժամանակակից պատմական դեպքերին ու դեմքերին։

Ռուսական օրիենտացիան, ինչպես 18-րդ դարում և 19 դ դարի առաջին կիսում,[1] այնպես էլ 19-րդ դարի երկրորդ կիսում, բխում էր հայ ժողովրդի կենսական շահերից և համապատասխանում նրա ճնշող մեծամասնության ցանկությանը։

18–19-րդ դարերի հայ հասարակական մտքի ու հայ ազատագրական շարժումների բոլոր այն ներկայացուցիչները, որոնք հայ ժողովրդի ազատագրությունը պարսկական և օսմանյան դեսպոտիզմի լծից՝ կապում էին Ռուսաստանի հետ, նրանք արտահայտում էին հայ ժողովրդի ձգտումները ու ցանկությունները։

Սա լոկ խոսք չէ, սա ռեալ իրականություն է։

Արծրունին, Ռաֆֆին, Մկրտիչ Փորթուգալյանը, Արփիար Արփիարյանը (Հայկակ), Արսեն Թոխմախյանը և մեր ժողովրդի բոլոր մյուս առա-

[1] Այդ մասին տես մեր «Հարցերի դատություն քաղաքականությունը հայկական հարցում», մաս II, 1940 թ., Երևան, էջ 11–12, 16–17, 103–108 և այլն։

Ռավոր մտածողները, Թուրքահայերի բախտը կապելով Ռուսաստանի հետ՝

ա) հետևում էին մեր մեծ նախնիների՝ Իսրայել Օրու, Դավիթ Բեկի, Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի, Արովյանի, Նալբանդյանի և ուրիշների օրինակին։ Նրանք հաշվի էին առնում պատմության դասերը, հայ ժողովրդի մի մասի՝ պարսկական դեսպոտիզմի լծից ազատագրվելու և Ռուսաստանի հետ կապվելու դրական նշանակությունը։

բ) Ուշադրություն էին պատմական պրոգրեսի ձայնին, նախընտրում էին նորը հնից, պրոգրեսը ռեգրեսից։

Հպիվ թե հարկ լինի ապացուցելու, որ Ռուսաստանը միշտ էլ տնտեսապես, քաղաքականապես և կուլտուրապես բարձր է եղել Թուրքիայից։ Բավական է միայն նշել այն մեծ լուման, որ համաշխարհային կուլտուրայի գանձարանն էր մուծում ռուս ժողովուրդը ի դեմս Լոմոնոսովի, Գրիբոեդովի, Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Բելինսկու, Չերնիշևսկու, Գլինկայի, Սեչենևի, Տոլստոյի և շատ ու շատ ուրիշների, որպեսզի հինավուրց կուլտուրական մի ժողովուրդ, ինչպիսին հայ ժողովուրդն է, գերազանցեր լինել այդպիսի մի ժողովրդի հետ, նախընտրեր լույսը խավարից։

գ) Արծրունին և կողմնակիցները ելնում էին ոչ միայն Թուրքահայերի, այլև ռուսահայերի շահերից, հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ երկու ամենախոշոր հատվածները միավորելու պատմական անհրաժեշտությունից։

Եթե պանթուրքիզմի ներկայացուցիչները, Անդրկովկասը հափշտակելու նպատակով, խնդիր էին դնում հայերին ռուսների լծից ազատագրելու մասին, ապա դա նախ շատ ծիծաղելի էր, իսկ երկրորդ՝ դրա իրականացումը մեծագույն չարիք կլիներ ոչ միայն Անդրկովկասի հայության, այլև Թյուրքահայերի համար։

Իսկ երբ դրվում էր Թուրքահայաստանը Ռուսահայաստանին կցելու, հայ ժողովրդին իր պատմական տերիտորիայում համախմբելու հարցը, ապա դա նախ շատ օրինական մի պահանջ էր և երկրորդ՝ օգտակար ոչ միայն Թուրքահայերի, այլև ռուսահայերի համար։

դ) Արծրունին և կողմնակիցները հարելով ռուսական օրիենտացիային, ջանում էին, Ռուսաստանի օգնությամբ, Թուրքահայ ժողովրդին ազատել սուլթանական ռեժիմի կրկնակի ծանր լծից, Թուրք փաշաների և քուրդ բեգերի վայրագ հարստահարություններից։ Ըստ որում նրանք չէին անգիտանում ցարական կառավարության կրկնակի ճնշումը ռուսահայերի նկատմամբ, բայց իրավացիորեն նախընտրում էին ռուսահայ դեմոկրատիայի վիճակը Թուրքահայ դեմոկրատիայի վիճակից։

ե) Վերջապես, Արծրունուն խորապես մտահոգում էր Թուրքահայերի ապագան։ Նա առնասարակ լավ ապագա չէր գուշակում «հիվանդ մարդուն» համար, ևս առավել նրա գարշապարի տակ հեծող հայ ժողովրդի համար։ Ընդհակառակը, Ռուսաստանի հետ կապվելով, ըստ Արծրունու, հայերը ոչ միայն հնարավորություն ձեռք կբերեին կապվելու համաշխարհային քաղաքակրթության հետ, այլև կդառնային այդ քաղաքակրթության տարածողները Փոքր Ասիայում։

Որպես կապիտալիզմի ֆատագով. Արծրունին Հայաստանի տնտեսական զարգացման ապագան ամբողջությամբ կապում էր Ռուսաստանում բուռն թափով զարգացող կապիտալիզմի հետ. իսկ Թուրքիայի հեռացնող ֆեոդալական սիստեմը իրավացիորեն դիտում էր որպես մի պատվար՝ կանգնած Հայաստանի տնտեսական զարգացման առջև։ Այդպիսով Արծրունին պատմական հեռանկարով էլ նայում էր դեպի առաջ և ձգտում էր, որ իր հետ միասին բոլորը նայեն դեպի առաջ։

Ահա որանք էին այն հիմնական կողմանները, որոնք Արծրունուն և ժամանակակից բոլոր պրոգրեսիվ տարրերին մղում էին դեպի ռուսական օրիենտացիա։

Ֆատահական չէ, որ նույնիսկ ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության դեմ պայքարող ռուսահայ դեմոկրատներից շատերը (օրինակ՝ 1881 թ. Մոսկվայի հայ-ուսանողների «Հայրենասերների Միության», 1882—1883 թ. թ. Թիֆլիսում կազմակերպված նարոդնիկական հոսքերով տարված հայ պատրիոտների անլեգալ խմբակի անդամները և ուրիշները) Թուրքահայերի ազատագրության հարցում հարում էին ռուսական օրիենտացիային, դրա հետ կապելով, իհարկե, տարբեր նպատակներ։

Թե որքանով են հիմնավոր մեր պնդումները հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի մասին, թողնենք, որ խոսեն փաստերը. փաստերի լեզուն, ինչպես ասում են, ավելի պերճախոս է։

Մենք արդեն նշել ենք մի շարք կարևոր փաստեր 18-րդ դարի և 19-րդ դարի առաջին կեսի հայերի ռուսական օրիենտացիայի վերաբերյալ։ Այժմ ծանոթանանք 19-րդ դարի երկրորդ կեսի մի քանի կարևոր փաստերի հետ։

Սկսենք Միքայել Նալբանդյանից. ծանոթանանք հայ ռևոլուցիոն-դեմոկրատական հոսանքի առաջնորդի տեսակետներին։

Նալբանդյանը ցարիզմի ոխերիմ թշնամին էր. նա մարտնչում էր ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության դեմ. հայ ժողովրդի ազատագրության համար։ Հայտնի է, որ այդ վեհ նպատակի համար էլ նա զոհվեց։

Սակայն, որքան էլ պարադոքսալ թվա, կոնկրետ, Թուրքահայերի ազատագրության հարցում, սուլթանական Թուրքիայի և ցարական Ռուսաստանի միջև ընտրություն կատարելու հարցում, նա իր հայացքը դարձնում էր դեպի Ռուսաստան՝ ելնելով ռուսահայ և թուրքահայ դեմոկրատիայի շահերից։

1860—1861 թ. թ. Նալբանդյանը երկու անգամ լինում է Թուրքիայում։ Գոլսում եղած ժամանակ նա մոտիկ կապեր է հաստատում թուրքահայ դեմոկրատական տարրերի հետ, մասնակցում է կղերականության ու ամիրայության դեմ նրանց կողմից մղվող պայքարին։ Նալբանդյանը մոտիկից ծանոթանում է թուրքահայ դեմոկրատիայի իրավական, անտեսական, կուլտուրական գրության հետ։ Նրա վրա առանձնապես ծանր տպավորություն է թողնում մասսայորեն պաուպերիզացիայի ու պանդխտության ուղին բռնած թուրքահայ գյուղացիության թշվառ վիճակը։ Հետագայում «Հյուսիսափայլ»-ի համար Գետրոպավլովսկի բանտից գրած «Ազգային բրվառություն» հոդվածում Նալբանդյանը այսպես է նկարագրում թուրքահայերի սարսափելի վիճակը.

«Մենք զարմանում ենք, երբ տես ենք մեզում այն անշփացած, անապատված աշխարհի վրա, ուր այժմ մեր խեղճ, անտեր և անօգնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ բշվտության, հալածականության և հաստատության մինչև ենարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, աթյուն է քաշում այնտեղից, երբ լաց է լինում»։[1]

«Երկու տոդ-ի, «Ազգային Քշվառության», Պոլսի «Մեղուս»-ի և Պոլսի ռուսական դեսպանի հանձնարարությամբ 1861 թ. դեկտեմբերի 22-ին գրած «Պոլսահայ լուսավորչական համայնքը» զեկուցագրի մեջ Նալբանդյանը իրեն հատուկ վճռականությամբ հարձակվում է հայ կղերական ու ամիրայական տարրերի վրա, որոնք իրենց հերթին հարստահարում էին Թյուրքահայ աշխատավորությանը, խստորեն քննադատում է այսպես կոչված Ազգային Սահմանադրությունը և սահմանադրական տարրերին, որոնք կոմպրոմիսներ էին անում սուլթանի կառավարության ու հայ կղերա-ամիրայական վերնախավի հետ, և միասնական ռևոլուցիոն պայքարի ուղի է հարթում Թուրքահայ և ռուսահայ դեմոկրատիայի համար։

«Պոլսահայ լուսավորչական համայնքը» զեկուցագրում Նալբանդյանը ելնելով ռուսահայ և Թուրքահայ դեմոկրատիային համախմբելու և ռուսական ռևոլուցիոն շարժման հետ կապելու նպատակից, Պոլսի ռուսական դեսպանի (իմա ռուսական կառավարության։ Վ. Պ.) ուշադրությունն էր հրավիրում հայ և օտար տարրերի այն վտանգավոր պրոպագանդի վրա, որի նպատակն էր Թուրքահայերին հեռու պահել Ռուսաստանի ազդեցությունից և անջրպետ ստեղծել Թուրքահայերի ու ռուսահայերի միջև։

«Հայ ազգը գուրկ արտաքին ամեն մի պաշտպանությունից,— գրում է Նալբանդյանը,—ենթարկված Դռան կամայականությանը, փոքր առ փոքր կանցնի (և արդեն անցնում է) մասամբ կաթոլիկության, մասամբ բողոքականության և դրա հետ մեկտեղ կառաջանվի Ֆրանսիայի և Անգլիայի բարոյական ազդեցությունը Թուրքիայում։ Մինչդեռ հայերը ամբողջ Թուրքիայում տարամաղրված են Ռուսաստանի օգտին և եթե ռուս կառավարության կողմից ցույց տրվի Նրանց թեկուզ ամենափոքր օգնությունը, այն ժամանակ ֆրանսիական և անգլիական կառավարությունները կզրկվեն նրանց վրա ներգործելու հնարավորությունից, հետևաբար և կանգ կառնի նրանց կրոնի և ազդեցության պրոպագանդը»։[2]

Թուրքահայերին ռուսահայերից անջատելու փորձերը Նալբանդյանը իրավացիորեն դիտում էր որպես մի լուրջ վտանգ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի միավորման այն ձեռնարկումների դեմ, որ նույն այդ տարիներին նա սկսել էր իր ռուս և արևմտահայ բարեկամների հետ մեկտեղ։

Նշենք նաև, որ 1860-ական թվականների հայ լուսավորչական շարժման այնպիսի ականավոր մի դեմք, ինչպիսին Ստեփանոս Նազարյանն էր, նա ևս հայ ժողովրդի բախտը կապում էր Ռուսաստանի հետ։

1868 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի պատրիարքին և ազգային վարչությանը ուղարկած իրենց մի հանրագրի մեջ Մուշի հայերի ներկայացու-

---

[1] «Հյուսիսափայլ», 1868, № 3.

[2] Միք. Նալբանդյան, Անտիպ երկեր, էջ 80 ընդգծումները մերն են։ Վ. Պ.

ցիչները նկարագրելով ժողովրդի ծանր ու անապահով դրությունը, բրգերի վայրագությունները ու կողոպուտը, գրում են.

«Երկու տարի առաջ Մատնավանք կողոպտեցին ու վանահայր Պողոս վանականին. բնավ պաշտպանություն չեղավ տեղեր և ոչ քննություն մը ու հատուցում այս տեղեն, քանի հայեր սպանվեցան ու իրենց արյան բողոքող ձը չեղավ. Զիարաթ գյուղի եկեղեցին կողոպտեցին... իսկ այս մեկ տարվան շրջանի մեջ յոթն եկեղեցի իրարու հետևե կողոպտեցին, որոց մեկն ալ բուն Մշո վիճի ս. Մարգիս եկեղեցին է, որո դռներ փակ և ինքն ամայի մնալով ավերման վիճակի հասավ. ասոնը ամենը տեղական կառավարությունը գիտե, և միշտ բողոքներ եղած է, բայց և ոչ մեկին դատաստան ու հատուցում եղած չէ. Դարձյալ այս մեկ տարվան շրջանի մեջ հինգ վեց կնիկ հայերեն փախուցին, բռնությամբ տանիկցուցին. Վարդուա հայոց կրած անլսելի հարստահարությունները և բռնաբարությունները, Սլիքանու եկեղեցվո՞ մեջ պատահած սրբապղծությունը, զոր իբր թռքնության առին, բայց բոլորովին երեսի վրա ձգած և այնտեղ հայեր մահու տագնապ կկրեն...

Բուն իսկ Մշո մեջ հայերը ի տարապարտուց կծեծվին. հավատք և խաչ հայհոյել տանկաց հասարակ խոսք ը եղած է. մինչև անգամ առ և տուր ունեցողներ չեն համարձակիր իրենց պահանջը պահանջել տանիկներեն.

Ակզն արդեն իր հուսահատությունեն երես դարձուցեր փախչել Ռուսաստան, վասն զի անտանելի է. խզճալյոց վինակը. արդեն բավական տներ գնացին երկրեն և գրեթե առհասարակ ամենու գաղափարն երթալն է»:[1]

1869 թ. գրած իր մի զեկուցագրում Էրզրումի անգլիական հյուպատոս Տեյլորը հետևյալ ուշագրավ տեղեկություններն է հաղորդում հայերի դեպի Ռուսաստանն ունեցած հավակրանքի մասին.

«Ամեն տեղ այս գավառներում հայերը դառն կերպով գանգատվում էին Թուրք կառավարության դեմ և միևնույն ժամանակ անչափ զովում էին Ռուսաստանը, բացեիբաց հայտնելով, թե որոշել էին այնտեղ գաղթել... Պետք է խոստովանել, որ հայերը դժգոհության համար լիուլի պատճառներ ունեն, որոնք են՝ Թուրք կառավարության իսկապես հոռի վարչական սիստեմը, հարկերի անհավասար բաշխումը, նրանց՝ ինչպես և տասանորդի չափազանց անկարգ հավաքումն, արդարության կատարյալ բացակայությունը, անընդհատ կատարվող գեղծումներն ու քրիստոնյաների՝ իսլամների հետ հավասար նկատվելու մասին պահանջման բացարձակորեն անգործադրելի մեթոդը...

Էրզրումի վիլայեթի բնակիչները՝ իբրև ռուսաց սահմանակից՝ ավելի ունեն այս զգացմունքը, քան Դիարբեքիրի և Խարփուրի հեռավոր նահանգների հայերը»:[2]

1872 թ. վանում կազմվում է «Միություն ի փրկություն» առաջին գաղտնի ընկերությունը. Ընկերության նպատակն էր պայքարել Թուրք և քուրդ հարստահարիչների դեմ, հայ ժողովրդի ազատագրության համար.

---

[1] Դիվան հայոց պատմության, գիրք ԺԳ., հարստահարությունները Տանկանայատանում, վավերագրեր. Թիֆլիս, 1915 թ., էջ 123—124. Ընդգծումը մերն է. Ա. Պ.

[2] Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանագրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912 թ. էջ 145—146. Տես նաև Blue Book, Turkey, № 16 (1877), p. 31—32.

Առաջադրված նպատակի իրագործման համար ընկերությունը որոշ հույսեր էր կապում Ռուսաստանի օգնության հետ։ Այդ նպատակով էլ 1872 թ. մայիսին Վանի հասարակության կողմից ընտրվում են երկու ներկայացուցիչներ՝ Հակոբ Կալոյան և Նշան Շիրվանյան, որոնք և անցնում են Կովկաս ու դիմումներ հանձնում Կովկասի փոխարքային և Երևանի նահանգապետին։

Փոխարքային գրած դիմումի մեջ մենք կարդում ենք.

«Ձերդ կայսերական բարձրություն...

Ռուսաց բազարի և մեծազոր տոգը. որ նույն սրբազան ավետարանի ուղղափառ և հշմարիտ աշակերտն է և ըստ աշխարհի ալ յուր ամենազորավոր ազգությունները խիստ հասանելի է այնոցիկ՝ որք նույն սրբազան պատվիրանաց ու կտակաց հետևող և հավատացող են...

Վանա խղճալի և թշվառ ժողովուրդը. որ միշտ այսգունակ եալածանաց մեջ կգտնվի, ի սեռն բարբարոսաց ե ազնեավատից, որուն համար դառն տրտաոսոք ձայն բարձած յուր ցրոնակցեն ե միանգամայն բարի և արի զրացիեն օգնություն կհայցե...

Կհամարձակինք արտասվաց կաթիլներով զրված սույն ազերսագիրը դիմառաա վեհությանդ մատուցանելով՝ անգամ մի ձեր՝հայրական ակնարկը տառապելոցս դարձնելով՝ շնորհեք մեզ մի գոնսիուլ. որ է ձեր շունչն ու ազդեցությունն ե զոր ասկից յոթ ութ տարի առաջ խնդրված ու խոստացած իսկ էրաս։

Վերին ատիճանի ուշադրավ է Վանի հասարակության կողմից վերոհիշյալ ներկայացուցիչներին արված «փոխանորդագիրք»-ը։

«Սարակնքյալ Վանա հայ հասարակությունքս ութ տասն տարիե ի ձեր աննեարին թշվառության և հարստահարության գերի մատնված և վերջին ատիճան հուսահատած ըլլալով, ելկու պատվավոր անձանց, այն է Հակոբ ագա Կալոյան և Նշան Շիրվանյանի խորհրդատությամբը նույն դառնագեա վիճակեն ազատվելու համար, որոշեցինք Նորին Մեծազոր Ռուսաց առատագութ կայսել հպատակելու դիմել. սորա գործոգությունն ալ վերսհիշեալ հարգելիք անձնվիրաբար հանձն առնելով՝ հասարակության կողմանե՝ այդ կողմը դիմեցին լիազոր փոխանորդությամբ. և մենք ալ միահամուռ, սիրով և սրտիվ ընդունելով, կնքեցինք սույն փոխանորդագիրքս։»

Հպատակը Ռուսաց
Ի Վան
1872

1872 մայիս 9
Ի Վան

Դրեթե նույն բովանդակությունն ունի Կալոյանի և Շիրվանյանի 1872 թ. հունիսի 3-ի դիմումը, որ նրանք ներկայացրել են Երևանի նահանգապետին։[3]

[1] Դիմումն այլոց պատմության, գիրք ԺԳ. էջ 273—274։ Ընդգծումները մերն են. Վ. Պ.։
[2] Նույն տեղում, էջ 276։
[3] Նույն տեղում, էջ 278—279։

Հարկ է ավելացնել, որ միայն Վանի հասարակությունը չէ, որ իր ապահովությունն ու փրկությունը փնտրում էր Ռուսաստանի օգնության և կամ նրա հպատակության տակ անցնելու մեջ։ Այդպիսի ցանկությամբ հոտակված էր առավելապես Վանի վիլայեթի գյուղացիությունը, որը դաժան հարստահարություններից ծայրահեղորեն քայքայվել, հուսահատական դրության մեջ էր ընկել։ Ահա թե ինչ են գրում Վանի շրջանի մի շարք գյուղերի հասարակությունները «Միությունի փրկությունն» գաղտնի ընկերությանը։

26 ապրիլի 1872 թ.
Ի Վան

Մեծապատիվ անդամք գաղտնի ընկերության

Մեք ստորագրյալքս մեր կրած նեղության, հարստահարության և գրկանաց երեսեն բոլորովին հուսահատած ըլլալով, և միջոցներս լսելով որ քաղաքաժեղ ալ նույն ցավոք ժողովուրդը վարակած է և զգացած են այս անտանելի չարության իրենց վրա ծանրանալը, ընկերություն մը կազմած եք Միություն ի փրկություն անվամբ, ուստի ալ չկարենալով տոկալ սույն անկրելի լուծին՝ ձեզ կդիմենք, ձեզ հետ միանալու՝ թերևս դարման մը դտնեք թե ինչ միջոցով որ կարելի է այս չարիքներեն փրկվելու։

Պատրաստ եմք արյան և մահու չափ ձեզ հետ գալելու, ուր որ ալ մեր փրկության հույս զմեզ տանի. թե ռուսանալ հարկ է՝ ռուսանալ. թե դաղթել դաղթենք. թե վերջապես մեռնիլ՝ մեռնինք, բայց փրկվինք. այս է մեր աղերս առ ձեզ և առ աստված. և կերդնունք չքաժնվիլ ի միմյանց. բայց եթե մահվամբ միայն[1]։ (Հետևում են 3 գյուղերի ներկայացուցիչների ստորագրությունները)։

Այս փաստերը պարզորոշ կերպով ցույց են տալիս Վանի և գավառի հայ ազգաբնակության հավակրանքը դեպի Ռուսաստանը, իրենց փրկությունը քրիստոնյա, քաջարի, միշտ հաղթող ռուս ազգի հետ կապելու նրանց ցանկությունը։

1876 թ. սեպտեմբերի 23-ին Պոլսի անգլիական դեսպանը հեռագրում է Լոնդոն.

«Հայերի մեջ արտահայտվեց գժգոհության չարժում, որ կարող է լուրջ կերպարանք ստանալ...

Հայոց ուսյալ դասակարգի մեծամասնությունը խիստ կերպով հակառակ է Ռուսաստանին, բայց ժողովուրդը, բազմությունն, որոնք իսկապես առանձվում են այդ հարստահարություններից, այդպես չեն և հավատացած են, որ եթե փոփոխություն լինի (այսինքն եթե ռուսական տիրապետությունը գա), ավելի լավ կլինի։[2]

1876 թ. հուլիսին Էրզրումից «Մշակ»-ին գրում են. «Միայն հայերի թշնամիները կարող են դիտամամբ հավատացնել, որ հայերի դրությունը Թուրքիայում լավ է... Կ. Պոլսի հարստացած հայերը դուցե և ցանկանում են Թուրքաց տիրապետության մեջ մնալ, բայց Հայաստանի հայերը. Թուր-

1 Նույն տեղ, էջ 278—279.

2 Սարգիսյան—Հայկական խնդիրը և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում, էջ 144-145, ընդգծումը բնագրինն է։ Պ.։

քիայի ասիական գավառների հայերը մեծ ձգտում ունեն դեպի Ռուսաստանի հետ միանալը»[1]

Իր հետագա նամակներից մեկում նույն հեղինակը որոշակի կերպով հայտնում է, որ «Փոքր Ասիայի հայերի ցանկությունն է միանալ ռուսաց սնտության հետ, հանգիստ ապրել և հաստատ օրենքներ վայելել»:

«Մեր բոլոր հայացքները ուղղված են դեպի Ռուսաստանը», գրում է Քղաքացը»[2]

1878 թ. փետրվարի 1-ին Ալեքսանդր II-ին և Արտաքին գործերի մինիստր Գորչակովին ուղղած իրենց գիմումների մեջ թուրքահայ հոգևորականության ներկայացուցիչները, Պոլսի պատրիարք Ներսես վարժապետյանի գլխավորությամբ, խնդրելով պաշտպանել Հայկական հարցը, գրում են, որ «Հայոց ազգի ուիտն ու փափագները միանում են Ռուսաստանի հետ», որ իրենք ցանկանում են ազգային կյանքով ապրել, պաշտպանել իրենց հայրենիքն ու սահմանները և այդ բոլորի իրականացման համար հույսը կապում են Ռուսաստանի հետ»[3]

1879 թ. հունվարի 25-ին Ադրիանապոլսի հայերի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները ներկայանում են ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Տոտլեբենին և նրան հանձնում թագավորին հասցեագրված իրենց ուղերձը։ Դիմելով Տոտլեբենին՝ Ադրիանապոլսի հայոց առաջնորդ Գեորգ եպիսկոպոսն ասում է.

«Ընդունեցեք այս ուղերձը իբրև անկեղծ արտահայտություն այն սիրո զգացմունքի, որ ունին մեր հայրենակիցները դեպի Ռուսաստանը... Ես ինձ երջանիկ եմ համարում հայտնել ձեզ այս հանդիսավոր ժամին, որ հայերը, ինչպես և Ադրիանապոլսի բոլոր մյուս հասարակությունները, վայելել են այն անդորրությունը, որ մինչև այդ ժամանակ նրանք բնավ չէին տեսած և ես բոլոր սրտով կցանկանայի, որ այսքան մխիթարական դրությունը մեր արենակից եղբայրների բարելավության համար, դեռ երկար ժամանակ տևեր»[4]

Այսպիսին էր ամբողջ թուրքահայության ցանկությունը, բացառությամբ Թուրքիայի վարչական և տնտեսական կյանքում տաքուկ տեղեր գրաված մի խումբ մարդկանց և եվրոպական որոշ պետությունների ու նրանց դեսպանատների ազդեցության տակ գտնվող շրջանների, որոնք, համեմատած առաջինների հետ, իրենց հետևորդներով հանդերձ, աննշան փոքրամասնություն էին կազմում։

Թուրքահայերի ազատագրությունը, ինչպես ասել ենք, Ռուսաստանի հետ էր կապում նաև ռուսահայերի ճնշող մեծամասնությունը։

Ռուսահայերի այդպիսինակ ցանկությունները արտահայտություն են գտել 1876 թ. Ալեքսանդր II-ին ուղղած Թիֆլիսի հայ հասարակության ուղերձի մեջ։ Այդտեղ ասված է.

«Մենք, Թիֆլիս քաղաքի բնակիչ հայերս, չենք կարող անտարբեր մնալ դեպի այն անհանդուրժելի տանջանքները, որոնք կրում են ասիական Թուրքիայի սահմաններում բնակվող մեր ցեղակիցները և համադավանները,

[1] «Մշակ», 1876 թ. հուլիսի 22, № 87 Նամակ Էրզրումից։
[2] «Մշակ», 1876 թ. սեպտեմբերի 23, № 88։
[3] Սարգսյան — Հայկական խնդիրը, էջ 274—278։
[4] «Մշակ», 1879 թ. փետրվար 10, № 20։

որտեղ ոչ սեփականությունը, ոչ անհատությունը, ոչ կրոնը, ոչ կյանքը քրիստոնյաների, ոչ նրանց ընտանիքի, կանանց և աղջիկների պատիվը ոչնչով չէ ապահովված... Մենք մեր թե արյունով և թե կրոնքով եղբայրների գրությյան բարելավացնելու մասին բոլոր հույսը դնում ենք Ռուսաստանի հզոր հեղինակության ուժի վրա։[1]

Թիֆլիսի հայերի այս ուղերձը, ինչպես «Մշակ»-ն է արձանագրում, զոհունակություն է առաջ բերում ոչ միայն ռուսահայերի, այլև թուրքահայերի մեջ։[2]

Վերջապես, եթե նույնիսկ մի կողմ թողնելու լինենք այս և նմանօրինակ փաստերը և միմիայն նկատի ունենանք այն վերաբերմունքը, որ Թուրքիայի լծի տակ տառապող հայերը ցույց տվին 1877-1878 թ. թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, այդ էլ բավական կլիներ համոզվելու, որ թուրքահայերի համակրանքը ռուսների կողմն էր և նրանցից էին սպասում իրենց փրկությունը։

Եթե ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայերը գենք էին վերցնում և օգնում էին ռուս զորքերին, եթե Ալաշկերտի, Էրզրումի, Արդահանի և Թուրքահայաստանի այլ վայրերի հայերը ոգջունում էին նշանավոր հայ զորավարներ Տեր-Ղուկասովի, Լազարեի և ուրիշների գլխավորությամբ գործող ռուսական զորքերի մուտքը, իրենց տան դռները լայնորեն բաց էին անում նրանց առաջ, ամեն կերպ օգնում, օժանդակում էին նրանց, այդ բնավ չէր նշանակում, թե նրանք դրանով ուզում էին անվանի հայ զորավարների և քաջարի ռուս զինվորների փառքի վրա նոր փառք ավելացնել։ Դա պարզապես ապացույց էր այն բանի, որ Թուրքիայի հայերը իրենց ազատագրության հույսը կապում էին Ռուսաստանի օգնության հետ, և այդպես էլ էր։ Ռուսական զորքերի գրված չրջաններում հայերը ազատագրվում էին թուրք փաշաների ու քուրդ բեգերի հարստահարություններից, ազգային, կրոնական և բարոյական ճնշումներից։

Բնորոշ է այն փաստը, որ երբ 1877 թ. գեներալ Արշակ Տեր-Ղուկասովի զորքերը, տակտիկական նկատառումներով, սկսում են նահանջել Ալաշկերտից, նրանց հետ Ռուսահայաստան են գաղթում Ալաշկերտի հովտի տասնյակ հազարավոր հայեր։ Երբ 1878 թ. ռուսական զորքերը սկսում են ետ քաշվել իրենց գրված վայրերից, Էրզրումի և մի չարք այլ գավառների հայերը ոտքի են կանգնում՝ ժասսայորեն Հայաստան գաղթելու։ Գեներալ-լեյտենանտ Լազարեը սարսափած է լինում հատուկ կոչով դիմելու ժողովրդին՝ գաղթի առաջն առնելու համար։ Խրիմյանը, Սրվանձտյանը և ուրիշները կոչ են անում ժողովրդին՝ չգաղթել, չլքել իրենց տունն ու տեղը, իրենց հայրենի հողն ու ջուրը։ Ահա այդպիսին էր թուրքահայ ժողովրդի տրամադրությունը ռուս-թուրքական պատերազմի տարիներին։

Եվ եթե Արծրունին, հակառակ կղերա-պատպանողական ձանձի, հակառակ Ռուսաստանի սրցակից մեծ պետությունների Թուրքիայի հետ սահման չաներով կապված հայկական ապագայնացած որոշ խավերի, թուրքահայերի ազատագրությունը կապում էր Ռուսաստանի օգնության

[1] «Մշակ», 1876 թ. հուլիսի 16, № 48։
[2] «Մշակ», 1876 թ., դեկտեմբերի 23, № 49։

տեսա, դրանով նա հարազատորեն արտահայտում էր այն տիրապետող ցանկությունը, որ կար հայ ժողովրդի ճնշող մեծամասնության մեջ։

Ռուսական օրիենտացիան ոչ մի ժամանակ այնպիսի ժողովրդականություն չի վայելել հայերի մեջ, ինչպես Հայկական հարցի այս շրջանում։ Իրոք, մինչև առավել նա Հայկական հարցի այս հատվածում, բոլոր դեպքերում թուրքահայերի համար ավելորդ էր լինել Ռուսաստանի հետ, քան թե մնալ սուլթանական Թուրքիայի դաժան լծի տակ։

Հայ ժողովրդի առաջավոր մտածողները հենց այս ուղիով էլ առաջնորդում էին հայերին, հավատարիմ մնալով նրանց ցանկություններին։

Սակայն միշտ չէ, որ ժողովրդի և նրա առաջավոր մտածողների լավագույն ցանկությունները գործ են դառնում։ Այդ նույնը կատարվեց և հայ ժողովրդի հետ։ 1877—1878 թ. թ. ռուս-թուրքական պատերազմը վերջացավ ռուսական զորքերի փայլուն հաղթանակներով, բայց հայերի ռուսական օրիենտացիան չավեց սպասած արդյունքը։ Ռուս-թուրքական պատերազմին միջամտեցին եվրոպական մեծ պետությունները, որոնք և հարկադրեցին Ռուսաստանին նա կանգնելու իր նվաճումներից, զիջումներ անելու ինչպես ընդհանուր հարցերում, այնպես էլ Հայկական հարցում։

Թուրքահայաստանը դարձյալ մնաց սուլթանական լծի տակ։ Թուրքահայերի ազատագրության և Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու փոխարեն առաջ քաշվեց Ռուսաստանի հովանավորության տակ Թուրքահայաստանում մասնակի բարենորոգումներ մտցնելու հարցը, որը և տեղ գտավ 1878 թ. մարտի 3-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև Սան-Ստեֆանոյում կնքված պայմանագրի 16-րդ հոդվածի մեջ։ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում ասված է.

«Նկատի ունենալով, որ Հայաստանում գրված, բայց Թուրքիային վերադարձվելիք վայրերից ռուսական զորքերի հեռանալը կարող է կռիվների և բարդությունների տեղիք տալ և բացասաբար անդրադառնալ երկու պետությունների բարյացակամ հարաբերությունների վրա, Բարձրագույն Դուռը պարտավորվում է Հայկական մարզերում, առանց ուշացման, փորձագրել տեղական պահանջներից բխող բարեկարգություններ ու ռեֆորմներ և պաշտպանել հայերի ապահովությունը քրդերից ու չերքեզներից»։[1]

Ինչպես տեսնում ենք, Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը այն չէր, ինչ հայերը ցանկանում, ինչի համար նրանք պայքարում էին։ Դա շատ հեռու էր Ռուսաստանի հետ միանալու և կամ ինքնավարություն ձեռք բերելու նրանց ցանկությունները բավարարելուց։ Այդ էր պատճառը, որ հայ պատգամավորները (Ներսես Վարժապետյան և ուրիշներ) շտապեցին իրենց անբավականությունը հայտնելու Պոլսի ռուսական դեսպան, 16-րդ հոդվածի հեղինակ Իգնատյևից, կշտամբելով նրան, որ շատ քիչ է պահանջել հայերի համար։ Բայց փորձված դիվանագետը այնպիսի արդարացումներ է ներկայացնում, որ հայ պատգամավորները սարսափած են լինում լսել։ «Հայերը,—ասում է Իգնատյևը,—չպետք է մեզնից պահանջեն ա-

[1] Проф. Ю. В. Ключников и А. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть I 1926, Москва, стр. 222.

վելին, քան այն, որ այժմ իրականում մենք կարող ենք ձեռք բերել։ Համենայն դեպս, եթե մեզ հաջողվի Դոռան հետ համաձայնության գալ պայմանագրում առաջարկված հոդվածի իմաստով, ապա Ռուսաստանի պաշտոնական հովանավորությունը նրանց (հայերի։ Վ. Պ.) նկատմամբ կապահովվի և դա կլինի կարևոր բայլ նրանց ապագայի բարելավման ճանապարհին։[1]

Իր մեմուարներում Իգնատյեր ուշագրավ փաստեր է բերում այն ընդդիմադրությունների մասին, որ Թուրքիայի և եվրոպական որոշ պետությունների ներկայացուցիչները ցույց են տվել Հայկական հարցի քննարկման ժամանակ։ Այսպես, օրինակ, երբ Իգնատյևը Թուրքիայի արտաքին գործերի մինիստր և թուրքական պատվիրակության նախագահ Սաֆեթ փաշային առաջարկում է պայմանագրի մեջ մտցնել համապատասխան հոդված՝ վիլայեթների ինքնավարության վերաբերող 1878 թ. օրենքը Վանի, Էրզրումի, Սվասի և Մուշի հայկական վիլայեթների վրա տարածելու մասին, փաշան խիստ կերպով բողոքում է՝ ասելով. «Դուք մեզ համարյա թե գրկել եք եվրոպական մարզերից, գոնե մեզ հանկիստ թողեք Ասիայում»։[2] Խոսելով Սան-Ստեֆանոյի պայմանագրի մեջ մեծ դժվարություններով մտցված 16-րդ հոդվածի նշանակության մասին, Իգնատյևը գրում է.

«Առաջին անգամ Հայաստանի անունը արտասանվում էր միջազգային պայմանագրի մեջ...

«Վերջապես ռուսական ներկայացուցիչները կարողացան համաձայնեցնել Թուրքիայի ներկայացուցիչներին սառարգելու թեկուզ ոչ այն պայմանները, որոնք սկզբում խմբագրվել էին, բայց գոհացուցիչ, միայն այն իմաստով, որ առաջին անգամ Դոռան վրա պարտավորություն էր դրվում անհապաղ բարելավել հայերի դրությունը, անցկացնել այն ռեֆորմները, որոնք բխում էին տեղական պահանջներից, և ապահովել հայ ազգաբնակությանը քրդերի ու չերքեզների կամայականություններից։ Այս հոդվածի նմանօրինակ խմբագրությունը հնարավորություն էր տալիս Ռուսաստանին առաձգական նշանակություն տալ նրան, նայած պայմաններին և, համենայն դեպս, պաշտոնապես միջամտելու Դոռան պարտավորությունների կատարման եղանակի մեջ՝ հենվելով տեղական կարիքների վրա։

Միջազգային ակտի մեջ հանգիստավոր խոստովանությունն այն մասին, որ քրդերն ու չերքեզները սպառնում էին քրիստոնյա ազգաբնակությանը, հրապարակային դատավճիռ էր գոյություն ունեցող թուրքական ադմինիստրացիայի նկատմամբ՝ ճանաչված սուլթանի ներկայացուցիչների համաձայնությամբ։ Զինված այս պայմանագրային հոդվածով՝ ռուսական դեսպանը Կոստանդնուպոլսում կատարյալ հնարավորություն էր ձեռք բերում նշանակալից չափով ազդելու հայ ազգաբնակության դրության բարելավման վրա ե. հասկանալի է, Ռուսաստանի չահերի համեմատ, համապատասխան հանգամանքներում, գարկ տալու Հայկական հարցին Թուրքիայում։»

[1] Исторический Вестник, 1916 г. июль, стр. 59

[2] Նույն տեղ.

[3] Նույն տեղ, էջ 59—60.

Ինչպես էլ որ դնահատելու լինենք Իգնատյևի վերաբերմունքը դեպի Հայկական հարցը, այնուամենայնիվ չենք կարող դանց առնել նրա ջանքերը՝ Ռուսաստանի շահերի համապատասխան, Հայկական հարցին լուծում տալու ուղղությամբ, որը և միանգամայն հնարավոր էր, հայերի համար էլ ձեռնտու։

Հայկական հարցի տվյալ ետապում հայ ժողովրդի և Ռուսաստանի շահերը համընկնում էին ավելի, քան Թուրքիայի կամ Եվրոպական օրևե այլ մեծ տերությանց շահերը։ Ռուսական ծրագիրը Հայկական հարցի լուծման անհամեմատ ավելի ռեալ և նախընտրելի ծրագիր էր։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը իր ժամանակին, երբ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը ձգտում էր նույնիսկ աշխարհագրական քարտեզից ջնջել Հայաստան անունը և կոչել Քրդստան, երբ Թուրքիայի մեծ վեզիր Քեմալ փաշան հրապարակով հայտարարում էր, թե «պետք է ոչնչացնել բոլոր այն ծնողները, որոնք կարտասանեն Հայաստան բառը», այդ հոդվածը հայերի համար նպաստավոր, դրական մի երևույթ էր։ Այստեղից էլ հասկանալի է, թե որքան անհիմն և միակողմանի կլիներ 16-րդ հոդվածը, ասել է թե «ռուսական քաղաքականության հաղթանակը, դնահատել որպես «մեծագույն չարիք» և «նիրը» հայերի համար, ինչպես այդ անում է պրոֆեսոր Լեոն,[1] կառչած մնալով Արևելյան հարցի մասին Պոկրովսկու ու նրա շկոլայի սոցիոլոգիական սխեմաներին։

Այս ամենից հետո պարզ է, թե որքան սխալ ու ֆետակար է նացիոնալիստ պատմաբան Դավիթ Անանունի այն կոնցեպցիան, թե՝ «Դրգնալիստ էր եռյը, երբ Ռուսաստանի աջակցության կամ բարի վերաբերմունքի մեջ էր օրհնում իր քաղաքական ծրագրի իրագործումը»։[2]

Հայտնի է, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը չարժանացավ իրագործման բախտի։ Ռուսաստանի հակառակորդ մեծ պետությունները, նոր պատերազմի սպառնալիքի տակ, պահանջեցին վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը։ 1878 թ. հունիսի 13-ին գումարվեց Բեռլինի կոնգրեսը, որտեղ և Բիսմարկի նախագահությամբ վերանայվեց ու փոփոխության ենթարկվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը։

Բեռլինի կոնգրեսը Ռուսաստանին զրկեց բոլոր այն նվաճումներից, որ նա ձեռք էր բերել Սան-Ստեֆանոյի պայմանագրով։

Բեռլինի կոնգրեսը ծանր հարված հասցրեց նաև հայ ժողովրդին։ Ամենից առաջ նա խուզեց Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը և 61-րդ հոդվածի տակ պահեց միայն ռեֆորմներին վերաբերող մասը։ Երկրորդ, որ և էականը է, այդ հոդվածի գործադրման հսկողությունը դրվեց՝ վեց մեծ պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի վրա։

Ահավասիկ այդ հոդվածի լրիվ տեքստը։

«Բարձրագույն Դուռը պարտավորվում է, առանց ուշացնելու, Հայկական մարզերում գործադրել տեղական պահանջներից բխող բարեկարգություններ ու ռեֆորմներ և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզ-

[1] Պրոֆ. Լեո, Թուրքական հեղափոխության դաղափարաբանությունը, հ. II., էջ 78, 1934 թ., Փարիզ։

[2] Ե. Աճառեան, Ռուսահայերի հասարակական դարդացումը, հ. II, 1932, Էջմիածին, էջ 283։

ներից ու քրդերից։ Այդ նպատակի համար ձեռք առած միջոցների մասին նա պետք է պարբերաբար հաղորդի պետություններին, որոնք պիտի հսկեն նրա գործադրման վրա»։[1]

Եթե 16-րդ հոդվածի գործադրման վրա հսկելու էր միայն Ռուսաստանը, այժմ արդեն 61-րդ հոդվածի գործադրության վրա պետք է հսկեին տարբեր և հակառակ շահեր ունեցող վեց պետություններ, մի բան, որ, ինչպես փորձն էլ ցույց տվեց, բնավ իրագործելի չէր։ Տեղին է վերհիշել ռուսական ժողովրդական առածը՝ „У семи нянек—дитя без глазу".

Եվրոպական հեղինակներից մեկն ասում է. «Հավաքական երաշխավորություններն ավելի երևակայական են, քան իրական։ Նրանք չունեն այն արժեքը, որ ունի մի անհատական երաշխավորություն։ Ճիշտ այդպիսին եղավ հայերի համար Բեռլինի կոնգրեսը։

Բայց չնայած դրան, հայերի մեջ էլ գտնվեցին Մինաս Չերազի պես անհեռատես քաղաքագետներ, որոնք ասում էին, թե «Պերլինի վեհաժողովին մի ոսկեհանք շահեցանք, մեզ անկ է խիղախել և հանել ոսկին»։[2] Գտնվեցին մարդիկ, որոնք 61-րդ հոդվածը վեր դասեցին 16-րդ հոդվածից, հույս դնելով մեծ պետությունների մրցության վրա, ասելով՝ «Հայ տարրը ազատ պիտի քաղե այս մրցումեն»։

Ավաղ, նրանք չարաչար սխալվեցին, քանի որ, ինչպես Խրիմյանն էր պատկերավոր ձևով արտահայտում, հայերը իրենց թղթե շերեփով երբեք չպետք է կարողանային միջազգային դիվանագիտության հարիսայի պուտուկից դնթ մի պրտուճ հարիսա հանել, ինչպես այդ անում էին երկաթե շերեփ ունեցողները։

Բնորոշ է, որ Բեռլինի կոնգրեսի հայ պատվիրակության[3] ներկայացրած պահանջները նույնիսկ ուշադրության չառնվեցին կոնգրեսի կողմից, իսկ պատվիրակներին թույլ չտվեցին կոնգրեսի շենքը մտնել։ Եվ այդպես կազմվեց տխրահռչակ 61-րդ հոդվածը։

Այդ տեղի ունեցավ հունիսի 8-ի նիստում։ Նույն օրը պատվիրակներից մեկը՝ Ստեփան Փափազյանը իր հուշատետրում գրում է. «Ես ու Չերազ երկու երեք անգամներ մտախոհ և հուզված սկսանք պտտել Քոնկրեսին տանող առաջ, խնդրեցինք Աստուծմե, որ ողորմի բյուրավոր անմեղ գոհերու արյունին և միլիոնավոր հայերու աղաղակին ու ապա աչքերնիս արցունքով լի տուն դարձանք»։

Հայկական պատվիրակությանը այլևս ոչինչ չէր մնում անելու։ Նրանք իրենց բողոքը ներկայացրին կոնգրեսի նախագահ Բիսմարկին և ձեռնունայն վերադարձան Բեռլինից։

Ահավասիկ այդ բողոքը։

«Հայ պատվիրակությունն իր ցավն է հայտնում, որ իր օրինավոր և

---

[1] Проф. *Ю. В. Ключников* и *А. Сабанин*, Международная политика и т. д., ч. I, стр. 229.

[2] Մինաս Չերազ—Թե ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովեն, էջ 33 և 29, 1878 թ., Պոլիս։

[3] Հայկական պատվիրակության կազմի մեջ մտնում էին՝ Մկրտիչ Խրիմյան, Խորեն Նար-Բեյ, Մինաս Չերազ և Ստեփան Փափազյան։

[4] «Անահիտ», Փարիզ, 1907 թ., № 3—4—5, էջ 88, Ստ. Փափազյան, «Գագամովրի մը հուշատետրեն»։

միանգամայն չափավոր պահանջները կոնգրեսի կողմից չընդունվեցին։ Մենք կարծեցինք, թե մի քանի միլիոնից բաղկացած մի ազգ, որ մինչ հիմա ոչ մի օտար քաղաքականության գործիք չէ դարձել, որ չնայելով իր ավելի հաբատահարված լինելուն, քան Թուրքիայի մյուս քրիստոնյա ցեղերն, ոչ մի նեղություն չէ պատճառել Թուրք կառավարության, և որ թեև ոչ մի մեծ պետության հավատակից և ցեղակից չէ, բայց և այնպես քրիստոնյա լինելով, ինչպես Թուրքիայի մյուս քրիստոնյա ժողովուրդները, այս մեր դարում կարող էր հուսալ, թե միևնույն պաշտպանությունը կգտնե, ինչ որ մյուսները, մենք կարծեցինք, թե այսպիսի մի ազգ որևէ քաղաքական փառասիրություն չունենալով՝ իրավունք կստանա իր սեփական կյանքով ապրելու և հայկական հողի վրա հայ պաշտոնյաների ձեռքով կառավարվելու։ Հայերը հասկացան, թե խարվել են, թե նրանց իրավունքները չեն ճանաչվել, որովհետև խաղաղասեր են եղել և թե իրանց նախնի եկեղեցու անկախությունն ու իրանց ազգությունը պահելով ոչինչ չեն ձեռք բերել։

«Հայ պատվիրակությունը պիտի եա դառնա Արևելք, իր հետ տանելով այդ դասը։ Բայց նա հայտնում է այսուամենայնիվ, թե հայ ժողովուրդն երբեք պիտի չդադրի աղաղակ հանելու, մինչև որ Եվրոպան նրա պահանջներին արդար դոհացում չտա։ Բեռլին, 13 հուլիսի, 1878թ.»[1]

Այսպիսով, Բեռլինի կոնգրեսը Հայկական հարցը դարձրեց մեծ պետությունների շահերի հետ կապված մի հարց, նրա լուծումն տնհամեմատ ռեալ ճանապարհից հանեց և դրեց բոլորովին աննպաստ ու վերջին հաշվով կորստաբեր ճանապարհի վրա։ Ռուսահայերի և Թուրքահայերի միավորման փորձերը տապալվեցին։ Թուրքահայերին չհաջողվեց միանալ Ռուսաստանի հետ և կանգնել զարգացման այն ուղիների վրա, որոնց վրա դտնվում էին ռուսահայերը։ Բեռլինի կոնգրեսը Թուրքահայերին և ռուսահայերին պահեց բաժան-բաժան վիճակում և աշխատեց անջրպետ ստեղծել նրանց մեջ։ Դա, իր ժամանակին, ամենածանր հարվածն էր, որ հայ ժողովուրդն ստանում էր միջազգային դիպլոմատիայից (գլխավորապես Անգլիայից) և մինչև վերջ էլ չկարողացավ բուժել իր այդ վերքերը։

Բեռլինի կոնդրեսը ալեկոծեց հայ ժողովրդի սիրտն ու միտքը։ Հիասթափության ու բողոքի ալիք բարձրացավ նրա դեմ։ Բեռլինի կոնգրեսը շրջադարձի կետ հանդիսացավ Հայկական հարցի պատմության մեջ։ Հայ հասարակական գործիչներից շատերը, որոնք անհեռատես ու անհետևողական գտնվելով, Սան-Սաեֆանոյից ավելի հույսեր էին կապում Բեռլինի կոնգրեսի հետ, սկսեցին վերանայել իրենց դիրքերը։ Արծրունին և նրա համախոհները «Մշակ»-ում, Մերենցն ու Սրվանձտյանը «Փորձ»-ում,[2] Մ. Գասկանյանը, Գաֆֆին և ուրիշները իրենց գեղարվեստական ստեղծագործությունների մեջ սկսեցին խարազանել «ապերախտ Եվրոպային», «Հայաստանի մեջն է բուն Հայկական խնդիրը։ Մենք Գերլինի մեջ կորոնենք գայլ»—գրում է Սրվանձտյանը։ «Մեզ վրա պետք է հույս դնենք եվ ոչ թե

[1] Սաթուրյան, Հայկական խնդիրը, էջ 67թ.

[2] Տես «Փորձ», 1879 թ., № 1, էջ 200—213, № 2, էջ 464 և այլն

[3] Գ. վ. Սրվանձտյան—Փորձ ազգայ Հայաստանի համարով, մաս I, 1879 թ., Գ-լիս, էջ 209. բնագծումը հեղինակինն է։ Վ. Գ.

Բեռլինի, ազդարարում է Արծրունու «Մշակ»-ը։ Այն ազգը, որ իՇՏՆ իր վրա հույս չունի, նա ապագա չունի։»[1]

Ընդհանուր գծերով, ահա, այսպիսին էին Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը՝ մինչև նրա միջազգային դիպլոմատիայի հարց դառնալը։

Парсамян В. А

Исторические пути развития армянского вопроса до Берлинского конгресса

Резюме

Армянский вопрос—один из основных вопросов нашей новой истории. Ни один вопрос истории Армении не удостоился столь большого внимания со стороны армянских и иностранных авторов, как Армянский вопрос. По данному вопросу написана большая литература на армянском, русском и европейских языках. Однако, этот вопрос и по сей день всесторонне, правдиво и научно не освещен. Нельзя излагать научную, марксистскую историю Армянского вопроса, не преодолев ложных, тенденциозных толкований буржуазной историографии.

Армянский вопрос вошел в историю международной дипломатии как вопрос, касающийся турецких армян. Этот вопрос, получивший в 1878 г. в Сан-Стефано и Берлине международную окраску, непосредственно касался только турецких армян. Впрочем, будучи таковым, он отнюдь не ограничивался рамкам турецко-армянской жизни, а выходил из этих рамок и принимал всеармянский—общенациональный характер. Иначе и не могло быть. Разъединенный в результате неблагоприятных исторических условий, весь армянский народ, в особенности русские армяне, были тесно связаны с турецкими армянами не только национальными, культурно-историческими многочисленными нитями, но и социально-политическими связями и весьма справедливо рассматривали их вопрос, как свой собственный вопрос.

В чем же сущность Армянского вопроса в Турции? Какие цели преследовали турецкие армяне?

Армянский вопрос в Турции не что иное, как национально-освободительная и социальная борьба турецких армян, в основном крестьянства, направленная против национального и феодального сурового угнетения и эксплоатации со стороны султанского военно-феодального деспотизма. Цель турецких армян—освободиться из-под тяжелого варварского ига турецких пашей и курдских беков, объединиться со своими единокровными братьями—армянами, живущими

[1] «Մշակ», 1879 թ., համար 81, № 175.

в Закавказье, образовать единую национальную семью и завоевать национальную независимость на исторической территории Армении. Вот главная цель, основной смысл Армянского вопроса.

Армянский вопрос, как и вопрос изнывающих под игом Турции греков, сербов и болгар, в той или иной мере связан с Восточным вопросом, в частности с интересами колониальной политики великих европейских держав (главным образом Англии) в отношении султанской Турции. Вопреки воле армянского народа и во вред его интересам, каждая из этих европейских держав старалась использовать Армянский вопрос в целях своей колониальной политики. Это обстоятельство весьма отрицательно отражалось на Армянском вопросе и осложняло не только внешние, но и внутренние условия благоприятного разрешения его. Армянский народ, в первую очередь турецкие армяне, не могли избежать сложной международной ситуации, создавшейся в Турции. Им оставалось найти какой-нибудь выход из тисков Сциллы султанского деспотизма и Харибды империалистических держав.

Какой же выход?—Этот выход диктовали как создавшаяся конкретная ситуация, уроки истории, так и живой пример предшественников, а именно: уповая на помощь России, объединиться с Русской Арменией. С помощью России восточные армяне освободились из-под ига персидского деспотизма. Этот же путь освобождения избрали также турецкие армяне. Не случайно, что во всех войнах русско-турецких (1828—1829, 1853—56, 1877—78) армяне принимали активное участие и, с оружием в руках, храбро сражались бок о бок с русскими против общего врага. Никогда русская ориентация не пользовалась среди армян столь большой популярностью, как в данном периоде Армянского вопроса. *Во всех случаях армянам было выгоднее выступать вместе с Россией, чем оставаться под игом султанской Турции и подвергнуться окончательному истреблению. Все представители армянской общественной мысли и национально-освободительного движения (Х. Абовян, Ст. Назарян, М. Налбандян, Гр. Арцруни* и др.), *которые связывали судьбу армянского народа с русским народом, являлись выразителями чаяний и стремлений армянского народа.* Вот почему мы должны отклонить вредную концепцию историка националиста Давида Ананума, согласно которой „армянин был идеалистом, когда осуществление своей политической программы искал в содействии или в благосклонном отношении России", или ошибочное утверждение проф. Лео, по которому 16-ая статья договора в Сан-Стефано была „величайшим злом и преступлением" в отношении армянского народа.

Для армянского народа 16-ая статья договора в Сан-Стефано была сравнительно более выгодна, чем 61-ая ст. Берлинского договора, не взирая на то, что и та и другая были весьма далеки от удовлетворения тех справедливых требований, которые выставляли армяне.